

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐՈՒՄ ՀՈՒՆԿԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ**

**ՅՈՒ Մ. ՉԱՐԻԻԵԼՅԱՆ**

Տվյալ խնդիրը վաղուց գոյություն ունի հնդեվրոպաբանության մեջ, և դրա վերաբերյալ առաջ են քաշվել տարբեր տեսակետներ: Այսօր առավելապես իշխում է այն կարծիքը, որ հնդեվրոպական նախալեզվում լիովին ձևավորված անվանական ու բայական հարացույցեր գոյություն չեն ունեցել, և դրանք զարգացել են միայն հետոնորդ լեզուներում: Խոսքն առաջին հերթին վերաբերում է հոլովման և խոնարհման հարացույցերին, որոնք ավանդական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվում էին միայն ըստ դասական լեզուների (հիմնականում հունարենի և լատիներենի), և այդպիսով ունենում էինք այդ լեզուներին մման համակարգեր: Արդի համեմատաբանության կողմից հիշյալ լեզուները այլևս բացարձակ նմուշներ չեն դիտվում, և համապատասխան խնդիրների քննարկման ժամանակ ներգրավվում են նաև ավելի ուշ վկայված ցեղակիցների փաստերը (հատկապես՝ բարբառային): Այդպիսով, ունենում ենք կոնկրետ խնդրի քննարկման այլ հնարավորություններ և հետևաբար նաև նոր լուծումներ: Այդ առումով կարևոր նշանակություն են ձեռք բերում հայերենի տվյալները, որոնք մի շարք հարցերում դառնում են առաջնային:

Այստեղ նպատակ է դրվում, ներգրավելով նաև հայերենի փաստերը, պարզաբանել հնդեվրոպական հոլովման համակարգի ձևավորման խնդիրը, որի վերաբերյալ եղած տեսակետները բավականաչափ իրարամերժ են: Նշենք, որ դասական հնդեվրոպաբանությունը, հիմնականում լատիներենի մամոողությամբ, վերականգնում է ութ հոլով, իսկ ժամանակակից տեսությունները՝ մինչև երկուսը (ուղղական և հայցական կամ էրգատիվ): Գոյություն ունեն մի շարք «միջին» տեսակետներ, որոնց հիման վրա վերականգնվում են չորս հոլովներ՝ ուղղական, հայցական, սեռական և գործիական<sup>1</sup>: Հարկ է նշել, որ հիշյալ տեսակետներից ոչ մեկը միանշանակ չի ընդունվում, քանի որ դրանք հիմնված են միայն սուբյեկտիվ փաստերի վրա՝ այս կամ այն հ.ե. լեզվի առավելությամբ: Ինչ վերաբերում է էրգատիվ հոլովի նախնականությանը, ապա դրա էությունը փորձ է արվում պարզել առանց հաշվի առնելու հ.ե. լեզուների կոնկրետ փաստերը: Մյուս հոլովների դեպքում խնդիրը հանգում է այն բանին, թե հ.ե. լեզուներում առավել տարածված ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովները զարգացել են միաժամանակ, թե՞ որոշակի հաջորդականությամբ: Տվյալ խնդիրը կարևոր է նաև շարահյուսության տեսակետից, և դրա լուծմամբ է պայմանավորված հ.ե. նախադասության կառուցվածքի պարզաբանումը:

Այս առումով հետաքրքիր է դասական հնդեվրոպաբանության կողմից վերականգնվող եզակի թվի ուղղականի \* -s-ի հարցը: Ինչպես գիտենք, հիշյալ վերջավորությունը վերականգնվում է հիմնականում ըստ դասական լեզուների փաստերի և հ.ե. մի շարք այլ լեզուներում (այդ թվում նաև հայերենում) չի

<sup>1</sup> Տե՛ս K. Schelds, Some remarks concerning early Indo-European nominal inflection, *The Journal of Indo-European Studies*, 3-4, 1998, էջ 185-210:

վկայվում: Ենթադրվում է, որ վերջիններս նախապես ունեցել են հիշյալ վերջավորությունը, իսկ հետագայում կորցրել են այն: Արդի մի շարք լեզվաբաններ, սակայն, կարծում են, որ այդ \*-s-ն ավելի ուշ զարգացման արդյունք է և սահմանափակվել է միայն արևմտյան խմբի առանձին հնդեվրոպական բարբառներով, իսկ հնդեվրոպական եզակի ուղղականը նախապես բնութագրվել է **-φ** (զրո) վերջավորությամբ<sup>2</sup>: Այս մտտեցումը կարծես իրական է թվում այն պատճառով, որ դասական հնդեվրոպաբանության մեջ ևս գոյություն ունի այն տեսակետը, որ ածանցման քերականական արտահայտության միջոցը հնդեվրոպական լեզուներում ավելի ուշ է զարգացել: Մենք առաջ ենք քաշել այն դրույթը, որ վաղ հնդեվրոպական շրջանում քերականական իմաստների արտահայտման ամենարդյունավետ միջոցը եղել է ներքին թեքումը, որի արտացոլումը ձայնդարձի երևույթն է<sup>3</sup>: Այս տեսակետը, սակայն, կարծես թե հակասության մեջ է դասական հնդեվրոպաբանության այն դրույթի հետ, որ հ.ե. լեզուների փաստերի հիման վրա վերականգնվող *e/o* ձայնդարձը ավելի ուշ երևույթ է, իսկ վաղ հնդեվրոպական շրջանում ունեցել ենք ձայնավորական ոչ լիակատար համակարգ: Տվյալ հակասության վերացման համար որպես բավարար պայման ենք համարում այն պնդումը, որ ընդհանուր հնդեվրոպական շրջանում հնարավոր էր ձայնդարձի երկու տիպերի միաժամանակյա գոյությունը՝ առանձին բարբառային խմբերում դրանցից որևէ մեկի գերակայությամբ: Այս առումով հարկ է նշել, որ ավանդական հնդեվրոպաբանությունը տարբերում է հ.ե. ձայնավորների հերթագայության կամ ձայնդարձի երկու տիպ՝ քանակական և որակական: Միևնույն ժամանակ, եթե որակական ձայնդարձի (*e/o* կամ *a/o*) հարցում առանձին տարբերություններ չկան, ապա քանակական ձայնդարձը մեկնաբանվում է ոչ միանշանակ կերպով: Առավել ընդունված է այն ներկայացնել որպես կարճ ձայնավորների երկարացում կամ կրճատում՝ կախված շեշտի դիրքից:

Արդի հնդեվրոպաբանության մեջ վիճարկվում է նաև *e/o* ձայնդարձի նախնականության դրույթը, և ավելի հավանական է համարվում այն տեսակետը, որ հ. ե. \**e*-ն և \**o*-ն հերթագայվել են նույն իրավունքներով, եթե ընդունվում է անվանական ձևերի նախնականության ավանդական մտտեցումը (հմմտ. *λέγω* «խոսում եմ»- *λόγος* «խոսք»)<sup>4</sup>:

Ըստ Եմալշտիզի՝ հնդեվրոպական *s-,l-,m-,r-,n-* հիմքով ուղղականը առաջացել է նախնական կոշականի հետ հակադրությամբ՝ ձայնավորների հերթագայության երկար սուստիճանի հիման վրա. հմմտ. հուն. *κῦων* «շուն»- *κῦον* «*o*», *շուն*», *Μήτηρ* «մայր»- *Μτῆρ* «*o*», մայր» կամ. հինդկ. *durmanās* «տխրադեմ»- *durmanas* «*o*», տխրադեմ» և այլն: Այդպիսով նա ապացուցում է, որ հնդեվրոպական նախալեզվում տեղի են ունեցել մի շարք հնչյունական փոփոխություններ, որոնց արդյունքում առաջացել է հերթագայության շարք, ինչպես, օրինակ՝ *e+r,l,m,n* > *ē* (բաղաձայններին նախորդող դիրքում) կամ *o+r,l,m,n* > *ō*<sup>5</sup>:

Հետևաբար, վաղ հնդեվրոպական \**pətēr* «հայր» ձևը վերածվել է *pətē* -ի (հինդկ. *pitā*, հայրսկ. *ptā*) սկզբնային բաղաձայնով բառից առաջ, իսկ սկզբնային

<sup>2</sup> Sh'u W. Schmalstieg, The Baltic first person singular ending – “General Linguistics”, 15, 1975:

<sup>3</sup> Տե՛ս Յու. Պաքրիեյան, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 140-141:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>5</sup> Sh'u Schmalstieg, նշվ. աշխ., էջ 27:

ձայնավորով բառից առաջ ունենում ենք \*pəter (հինդկ. pitar, հայրսկ. ptar, հուն. Πάτερ), և Շմալշտիգի պնդմամբ՝ նոր ձևը ձեռք է բերել ուղղականի գործառույթ: Նշենք, սակայն, որ այս ստուգումը հիմնավորվում է միայն այն լեզուների տվյալներով, որտեղ «հայր» բառը հանգում է հ.ե. \*pətēr -ին և կիրառելի չէ մյուս լեզուների (հայերեն, արբաներեն, սլավոնական լեզուներ և այլն) համար:

Հիշյալ խնդիրը, ինչպես նաև ընդհանրապես հայերենի հոլովական համակարգի ծագման ու զարգացման հարցերը ավանդական հնդեվրոպաբանության դիրքերից հանգամանորեն քննել է Գ. Ջահուկյանը: Մանրամասնորեն վերլուծելով թե՛ ընդհանուր հնդեվրոպական վերականգնվող հոլովական համակարգը և թե՛ դրանից բխող հայերենի համապատասխան ձևերը՝ նա, այնուամենայնիվ, նշում է, որ անհնար է վերականգնել ընդհանուր հնդեվրոպական հոլովական համակարգը իր մանրամասնություններով այնպես, որ միանշանակ հնարավոր լինի բացատրել առանձին հ.ե. լեզուներում հոլովման բոլոր կողմերը<sup>6</sup>:

Այսինքն՝ տարակարծությունների հիմնական պատճառը պետք է փնտրել հնդեվրոպական լեզվավիճակի ավանդական վերականգնման մեջ: Այսօր ավանդական հնդեվրոպաբանության կողմնակիցները նույնպես ընդունում են, որ ընդհանուր հնդեվրոպական շրջանում լատիներենի նման կատարյալ հոլովական համակարգ չէինք կարող ունենալ այն պատճառով, որ այդ շրջանում լեզվի շարահյուսական կառուցվածքը ավելի պարզ է եղել: Հետևաբար, ավանդական վերականգնումը իրական չէ, և անհրաժեշտ են այլ մեկնաբանություններ: Հետաքրքիրն այն է, որ եթե հնդեվրոպական լեզվավիճակի համար ընդունում ենք վերը նշված չորս կամ երկու հոլովների տեսությունները, ապա ուղղականի հարցը կրկին մնում է չպարզաբանված, և նույնիսկ Շմալշտիգի՝ վերոհիշյալ բավականաչափ ինքնատիպ մեկնաբանությունը կիրառելի չէ մի շարք հ.ե. լեզուների (այդ թվում նաև հայերենի) համար:

Հետևելով Վ. Շտրայտերբախին, որի կարծիքով հնդեվրոպական բայական հարացույցում ավելի վաղ ձևավորվել են 3-րդ դեգրի ձևերը, իսկ հետո միայն՝ մյուսները<sup>7</sup>, մենք առաջ ենք քաշել այն վարկածը, որ հնդեվրոպական հոլովման հարացույցում ուղղականի ձևը ավելի ուշ է զարգացել, քան սեռականը<sup>8</sup>: Բացի այնպիսի փաստերից, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում, ինչպես նաև իմ հայերենում հաճախ ենթական դրվել է սեռական հոլովով (հմմտ.՝ Եւ լուեալ Արտաշիսի գայսպիսի իմաստուն բանս, գնաց յեզր գետույն), վերոհիշյալ վարկածը, ըստ բնական լեզվաբանության դրույթների, իրական է թվում նաև այն պատճառով, որ ուղղականի ձևերի առկայությունը ենթադրում է վերացարկման որոշակի աստիճան, իսկ սեռական, տրական և հայցական ձևերը բխում են անմիջականորեն նախադասության կառուցվածքից: Նշենք նաև, որ, մի շարք լեզվաբանների կարծիքով, վաղ հնդեվրոպական շրջանում ուղղականի և սեռականի ձևերը համընկել են: Սակայն նրանք, այնուամենայնիվ, ավելի վաղ շրջանի են վերագրում ուղղականի ձևերը և կարծում են, որ հետևորդ լեզուներում սեռականի ձևերը զարգացել են հնդեվրոպական ուղղականի հիման վրա<sup>9</sup>: Այս տեսակետը, ինչպես տեսնում ենք, հակասում է մեր վերոհիշյալ վարկածին,

<sup>6</sup> Տե՛ս Գ. Բ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 99:

<sup>7</sup> Տե՛ս W. Streitberg, Die Entstehung der Dehnstufe, Indogermanische Forschungen, 3, 1894, էջ 47:

<sup>8</sup> Տե՛ս Յու. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 179:

<sup>9</sup> Տե՛ս W. Lehmann, On earlier stages of the Indo-European nominal inflection, „Language“, 34, էջ 179-202:

սակայն նաև հիմնավոր չէ այն պատճառով, որ մի շարք գիտնականներ, այդ թվում նաև Գ. Ջահուկյանը, ցույց են տվել, որ բազմաթիվ դեպքերում որպես գոյականի սեռական ձև հանդես է գալիս ածականը<sup>10</sup>: Այս առումով նշենք, որ, ըստ Լ. Տեսնիերի, սեռականով արտահայտված որոշիչը տարբերվում է ածականական որոշիչից, և սեռական ձևը իրականում ցույց է տալիս անցումը գոյականից ածականի՝ հոլովական ձևի միջոցով, այն դեպքում երբ ածականը կարող է լինել նախնական կամ բառակազմությամբ գոյականից առաջացած<sup>11</sup>: Այդպիսով, սեռական որոշիչի և ածականական որոշիչի կապը ստանում է բնական շարահյուսական բացատրություն, և այս կամ այն ձևի գործառույթը լեզվում ավելի շուտ հարկ է դիտել նորմ, քան թե համակարգ:

Հետևաբար, այստեղ քննարկվող խնդրի լուծումը պահանջում է հնդեվրոպական լեզվականացման վերաբերյալ ավանդական և ժամանակակից պատկերացումների պարզաբանում: Այս առումով նշենք, որ, ըստ ավանդական մոտեցման, հնդեվրոպական նախալեզուն համարվում էր կցական տիպի՝ առանձին թեքական տարբերով: Ընդհանրապես վաղ հնդեվրոպաբանները լեզվի վերլուծական տիպը դիտում էին նրա քայքայման շրջանը: Այսօր մոտեցումը այլ է, և ժամանակակից լեզվաբանների կարծիքով հնդեվրոպական լեզվի զարգացման վաղ շրջանում այն ունեցել է վերլուծական ձևաբանական կառուցվածք, իսկ ըստ քերականական կարգերի (կամ պարզապես նախադասության տարբեր բաղադրիչների միջև համաձայնեցումը), տեղի է ունեցել ավելի ուշ՝ հնդեվրոպական առանձին բարբառների ձևավորման շրջանում: Այստեղ առկա է նաև այն տեսակետը, որ հնդեվրոպական միասնության շրջանում նրա բարբառային տարբերակվածությունը արդեն նկատելի էր: Ք. Շիլդի կարծիքով այդ շրջանում համաձայնեցումը առաջանում է առաջին հերթին անվանական խմբերում, քանի որ անվանական խմբերի բաղադրիչները ժամանակակից լեզուներում կազմում են շարահյուսական սերտ միասնություն: Այդպիսով նա կարծում է, որ համաձայնեցման առաջացման համար կարևոր դեր են ունենում գոյականի և նրա ածականական որոշիչի (կամ որոշիչների) միջև սերտ կապերը, քանի որ գոյականը և նրա որոշիչը գտնվում են ոչ միայն «տարածական», այլև գործառույթային և կառուցվածքային փոխհարաբերությունների մեջ: Ուստի, բնական է, որ ածականը՝ որպես երկանդամի շարահյուսորեն ստորադաս բաղադրիչ, ընդունում է նույն վերջավորությունները, ինչը բնորոշ է գոյականին<sup>12</sup>: Հին հայերենում, սակայն, նախադաս որոշիչը կարող է չհամաձայնել որոշյալի հետ (հմտ.՝ **զկարմրիկն եղեգնիկ, հուր հեր, քաջն Արտաշես, սեզն Տրդատ** և այլն), այլ դեպքերում համաձայնությունը տեղի է ունենում գերազանցապես ըստ հոլովի, հաճախ նաև՝ ըստ թվի (հմտ.՝ **ժովն ծիրանի, աչագեղոյ դստերս, քաջի որդւոյն** և այլն): Նկատի ունենալով, որ հոլովական համակարգը հնդեվրոպական լեզուներում ավելի ուշ է զարգացել, կարելի է ենթադրել, որ նախապես վաղ հնդեվրոպական շրջանում համաձայնեցումը թույլ է եղել: Դեռևս Բ. Ուիլերը այն կարծիքն է հայտնել, թե բարդ բառերը ներկայացնում են այն ժամանակի մնացուկները, երբ հնդեվրոպական հոլովական լեզուներում վերջավորությունների ածանցումը անվանական հիմքերին դեռ գոյություն չուներ, և չէր ձևավորվել քերականական սեռը: Համեմատելով հունարենի \***ακροπολις** (և ոչ թե \* **ακράπολις**), **λογοποιοίς** (և ոչ թե **λογομποιοίς**) ձևերը՝ նա տեսնում է ածականի և

<sup>10</sup> Տե՛ս Գ. **Джаукян**, նշվ. աշխ., էջ 123:

<sup>11</sup> Տե՛ս Լ. **Tesnière**, *Éléments de syntaxe structurale*, Paris, 1959, էջ 144 :

<sup>12</sup> Տե՛ս Կ. **Schildt**, նշվ. աշխ., էջ 201:

գոյականի անհամաձայնություն, ինչպես նաև գոյականի գործածություն առանց հոլովական (հայցական) վերջավորության<sup>13</sup>:

Այս ամենի հաշվառումով, ինչպես նաև հինք ընդունելով հնդեվրոպաբանության մեջ վաղուց գոյություն ունեցող անվանական ձևերի նախնականության դրույթը՝ կարելի է եզրակացնել, որ վաղ հնդեվրոպական շրջանի համար վստահորեն կարող ենք վերականգնել սեռականը, որը նախապես արտահայտել է առարկայի հատկանիշի իմաստ: Ինչ վերաբերում է առարկան նշանակող ձևին, ապա այն չէր կարող ունենալ ուղղականի նշանակություն, քանի որ այդ շրջանում, ըստ ընդունված տեսակետի, բայը, զուրկ լինելով ժամանակի, սեռի, կերպի և եղանակի քերականական կարգերից, ենթակա - խնդիր հարաբերություններ չէր կարող արտահայտել: Ուստի բայը ևս հատկանիշ արտահայտող ձև է եղել: Նկատի ունենալով արդի հնդեվրոպաբանության մեջ գոյություն ունեցող այն դրույթը, որ բայական համակարգում որպես ելակետային ձև պետք է դիտել աորիստը (անցյալ կատարյալը), որը անվանական ծագում ունի<sup>14</sup>, անցյալ կատարյալի հարացույցում և ընդհանրապես հայերենի բայական համակարգում որպես հնագույն ձևեր կարելի է դիտել **արար** (1-ին դ.՝ **արարի**, 2-րդ դ.՝ **արարեր**), «անել, կատարել, ստեղծել, դարձնել» (հմմտ. նաև **առնել**), **եղ** (1-ին դ. **եղի**, 2-րդ դ. **եղիր**) «ղնել», **հատ** (եհատ) «հարկանել», **ես** «տալ», **եկն** «գալ», **արք** (**էարք**) «արբենալ» և այլն, որոնք ակնհայտորեն անվանական ծագում ունեն:

Այլ կերպ՝ նշված շրջանում նախադասության նվազագույն կառուցվածքը կազմում էին առարկա ցույց տվող ձևը՝ ընդհանուր, վերացական իմաստով, և նրա հատկանիշը ցույց տվող ձևը: Այս առումով ժամանակակից բնական լեզվաբանությունը կոնկրետ լեզվի նախադասության նվազագույն կաղապար է դիտում այնպիսի բարդությունները, որոնք բաղկացած են առարկա + հատկանիշ բաղադրիչներից: Այսպիսի կաղապարները լեզուներում համարվում են ոչ նշույթավորված (բնական), իսկ մյուսները՝ նշույթավորված (ոչ բնական): Ընդ որում՝ նշույթավորված կաղապարները, որպես կանոն, իրենց քանակով միշտ զիջում են ոչ նշույթավորվածներին և լեզվում համաբանական գործողության արդյունք են<sup>15</sup>: Միևնույն ժամանակ տիպաբանորեն ունենում ենք երկու հնարավոր ոչ նշույթավորված կաղապարներ՝ S+A և A+S, որտեղ S –ը առարկա ցույց տվող բաղադրիչն է, իսկ A-ն՝ առարկայի հատկանիշը: Ըստ այս կաղապարների՝ լեզուների զարգացման վաղ շրջանում ունենում ենք SVO (կամ SOV) և VSO (կամ VOS) շարահյուսական (նախադասության) կաղապարները, որտեղ S-ը ենթական է, V-ն՝ ստորոգյալը, իսկ O-ն՝ խնդիրը:

Այսպես, օրինակ, նկատի ունենալով, որ հայերենում գերիշխում է A+S նվազագույն ձևաբանական կաղապարը (ինչպես՝ **սևահող, որձաքար, կիսագունդ** և այլն), որպես վաղ շրջանի համար ոչ նյութավորված շարահյուսական կաղապար կարող ենք դիտել VSO- ն<sup>16</sup>: Եթե իրավացի են Վ. Լեհմանը և նրան հետևող լեզվաբանները, որ ընդհանուր հնդեվրոպականին բնորոշ է եղել նախադասության VSO կառուցվածքը<sup>17</sup>, ապա վաղ հնդեվրոպական շրջանի համար կարող ենք ենթադրել A+S նվազագույն կաղապարը, որտեղ A-ն սեռականի ձև է, իսկ S-ը իր ունեցած ընդհանուր, վերացականի իմաստի

<sup>13</sup> St'u B. Wheeler, The origin of grammatical gender, "Journal of English and German philology", 2, 1898, էջ 531:

<sup>14</sup> St'u W. R. Schmalstieg, Indo-European Linguistics. A New Synthesis, London, 1980, Chapter 4: "Verb Morphologie", էջ 89:

<sup>15</sup> St'u P. Y. Hopper, The typologie of the Proto-Indo-European Segmental inventory, "The Journal of Indo-European Studies", 5, 1, 1997:

<sup>16</sup> Տն. Չու. Չարրիկյան, նշվ. աշխ., էջ 181:

<sup>17</sup> St'u W. Lehmann, Historical Linguistics: An Introduction, New York, 1973, էջ 71:

պատճառով՝ արսուլուտիվի: Վերջինս հետագայում կարող էր զարգանալ որպես հայցականի ձև: Ամեն դեպքում հին հայերենում ունենք այնպիսի շարահյուսական կառույցներ, որտեղ հայցական հոլովով դրված և **զ** նախդիր ունեցող գոյական անունները գործածվում են ընդհանուր, վերացական իմաստով, որոնք որոշիչ հոդ չեն ստանում, օրինակ՝ «**Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր**»:

Սույն տեսակետը մոտ է այն լեզվաբանների կարծիքին, որոնք հնդեվրոպական վիճակի համար վերականգնում են նախադասության էրգատիվ կառուցվածք՝ էրգատիվ և արսուլուտիվ հոլովների առկայությամբ, որոնց հիման վրա հետագայում ձևավորվել են առանձին հետնորդ լեզուների հոլովական համակարգերը<sup>18</sup>: Դեռ Յ. Կարստը հին հայերենի համար ևս ենթադրում էր էրգատիվ նախադասության կառուցվածք, սեռական կամ տրական հոլովով դրված ենթակա, -եալ վերջածանցով կազմված բայանուն և ուղղականով կամ հայցականով դրված ուղիղ խնդիր: Ինչպես, օրինակ՝ **Նորա առեալ զայն քաղաքն** կամ **նորա հրաման առեալ**<sup>19</sup>: Քանի որ էրգատիվ նախադասության խնդիրը սերտորեն առչվում է բայի սեռի կարգին, որի առկայությունը վաղ հնդեվրոպական շրջանում բազմաթիվ լեզվաբանների կողմից մերժվում է, ապա մեզ ավելի իրական է թվում վերոհիշյալ բացատրությունը, թեև չենք բացառում նաև այդ տեսակետի հնարավորությունը:

Այսպիսով, վաղ հնդեվրոպական շրջանի համար կարող ենք վերականգնել միայն երկու հոլովական ձևեր՝ **սեռական** և **արսուլուտիվ** (պայմանականորեն՝ **հայցական**): Ինչ վերաբերում է ուղղականի և մյուս հոլովների ձևավորմանը, ապա կարծում ենք, որ առաջինը առաջացել է ընդհանուր հնդեվրոպական վիճակի քայքայման փուլում, երբ արդեն առկա էին տարբեր բարբառային տարածքներ, իսկ մյուսները՝ ավելի ուշ՝ հետնորդ լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում: Այդ պատճառով այստեղ առավել կարևոր ենք համարում ուղղական հոլովի զարգացման հանգամանքների պարզաբանումը:

Ինչպես վերը նշվեց, մեր «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» աշխատությունում ընդունում ենք այն տեսակետը, որ վաղ հնդեվրոպական շրջանում քերականական իմաստների արտահայտման հիմնական միջոցը եղել է ներքին թեքումը: Միևնույն ժամանակ, այստեղ զարգացվում է այն դրույթը, որ այդ շրջանից եկող նախնական ձևերը բնութագրվել են հետին շարքի արմատական ձայնավորների (\*a, \*o) առկայությամբ: Ապացուցվում է նաև, որ հին հայերենի **հաւր**, **մաւր** սեռականի ձևերը ավելի հին են, քան ուղղականի **հայր** և **մայր** ձևերը, քանի որ **այ** երկբարբառը հայերենի ավելի ուշ զարգացման արդյունք է: Համեմատելով հայերենի **հաւր** (**հօր** արժեքով) և **մաւր** (**մօր** արժեքով) սեռականի ձևերը մյուս հնդեվրոպական լեզուների հետ՝ տեսնում ենք, որ դրանք ուղղակիորեն «հայր» և «մայր» հասկացություններին չեն հանգում, այլ եղել են ածականներ՝ առաջինը «չափ, մեծ», իսկ երկրորդը՝ «չափ, փոքր» իմաստով<sup>20</sup>: Ընդունելով նաև հնդեվրոպական \*δ>\*ṛ հերթագայության հիմնավորվածությունը (հմմտ. **λόγος** «խոսք» > **λέγω** «խոսում եմ»)՝ հայերենի համար կունենաք սեռական **հօք** (հաւր) > ուղղական **հօք** (բրբ. հէր) և սեռական **մօք** (մաւր) > ուղղական **մօք** (բրբո. մէր) անդամները<sup>21</sup>: Ինչ վերաբերում է հայերենում

<sup>18</sup> Տե՛ս **K. Schields**, նշվ. աշխ., էջ 187:

<sup>19</sup> Տե՛ս **J. Karst**, *Alaroides et Proto-Basques, Vienne, 1928*, էջ 47:

<sup>20</sup> Տե՛ս Յու. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 167-178:

<sup>21</sup> Նշենք, որ մենք շատ դեպքերում բարբառային փաստերին տալիս ենք առաջնային նշանակություն:

♣ (է) > **ay** (այ) հերթագայության հետագա զարգացման պայմաններին, ապա դրանք հանգամանորեն քննարկված են մեր վերոհիշյալ աշխատությունում:

Այսպիսով, հայերենի **հայր** և **մայր** գոյականները իրենց բուն իմաստները ձեռք են բերում այն բանից հետո, երբ **հաւր** և **մաւր** ածականները (սեռական ձևերը) վերածվում են գոյականների (ուղղականի ձևերի), իսկ համակարգի ձևավորումից հետո **հաւր** և **մաւր** ձևերը ստանում են արդեն սեռականի իմաստ: Հմմտ. նաև սնսկ. **mātrā** «չափ, փոքր» > **mātar** «մայր», հուն. **Μέρος** «մաս», «չափ» > **Μῆρ** «մայր», հայ. **հօր** «օտար, փեսա» > **hayr**, հին գերմ. **heithin** «օտար, հեռու» > անգլ. **father**, սնսկ. **fəðrōi** «չափ, շատ», ինչպես նաև սեռական **pita** - > **pitar** «հայր» և այլն:

Ամփոփելով, նշենք, որ կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ընդհանուր հնդեվրոպական շրջանում չէինք կարող ունենալ այնպիսի կատարյալ հոլովական համակարգ, ինչպիսին վերականգնում էր ավանդական հնդեվրոպաբանությունը: Այդ շրջանի համար ավելի հավանական է վերականգնել սեռականը և մասամբ հայցականը (ոչ իր ավանդական իմաստով): Ուղղականը հնդեվրոպական լեզուներում առաջացել է այս երկու հոլովական ձևերից ավելի ուշ և հատկապես սեռականի հետ հակադրությամբ, ինչը հիմնավորվում է ինչպես ծագումնաբանորեն, այնպես էլ տիպաբանորեն: Մյուս հոլովները հետմորդ լեզուների ինքնուրույն զարգացման արդյունք են, և դրանց յուրահատկությունները կարելի է բացատրել արդեն զուտ տիպաբանության տեսակետից:

**Ю. М. ГАБРИЕЛЯН - Проблема развития форм склонения в индоевропейских языках.** - В статье предпринимается попытка пересмотра ранее существовавшего положения классической индоевропестики о многопадежной системе склонения в индоевропейском языке. При этом автор придерживается одной из новейших гипотез сравнительного языкознания о двупадежной системе в раннеиндоевропейском. Для обоснования этой гипотезы, наряду с фактами из других индоевропейских языков, в статье приводятся также данные армянского языка. На их основе реконструируются две исходные падежные формы (генитив и абсолютив) и констатируется отсутствие номинатива для раннеиндоевропейского периода.